

1475 ի Կառուց. «ի դառն եւ ի նեղ ժամանակիս, որ չգիտեմք թէ ինչ տի լինի Հայոց ազգիս ի գայլոց միջիս, չիւարեալ կամք ողորմելի» (Լալայեանց, Յուցակ, 472):

1486. յԱրժկէ, «ի դառն եւ ի վշտալից ժամանակիս, յորում ի խիստ եւ ի նեղութեան եւ ի շար ծառայութեան կամք ազգին նետողաց. զի յոյժ նեղեն եւ կեղեքեն զազգս քրիստոնէից...» (անդ, 499):

1487—1501 ի Վան. «Վրդովում եղեւ. եւ [ի] թագաւորութիւն Աղղաւլիին (Աղղոյունիին) ի տան բաժանեցաւ. եւ Սոփին շատ աւերք արար. եւ գնաց ի Ծամախի եւ էսո գճամախի եւ եսպան գճրուանչէն. եւ եղան դահիճ միմեանց. եւ ազգս Հայոց անկաւ ի նեղութիւն. զի մին զմիոյ երկիրն թալանէր. եւ Քուրդն էսո զանաւիկ բերդն զՎան եւ աւերաց զերկիրն Վանայ. եւ ամէն պարոն զիւր տեղաց անսւանի մարդն տուգանէր եւ թալանէր. եւ մեք զայն տեսաք եւ փախաք եւ մտաք յԱրժկէ» (Էջմիածին, Թ. 1591):

1488. «ի դառն եւ ի նեղ ժամանակիս, ի թագաւորութեան Աղղաւլիին, զի շատ փորձութիւն եւ նեղութիւն եւ վիշտ հասցց քրիստոնեայ ազգին եւ եկեղեցականացն կարգաւորաց. զի զկարգաւորք եւ զհայ եկեղեցիան (Չ. եղեն միսն) խափանեց. եւ զմեռեալն ի ցած սասց տանուլ եւ զժամ գարնունն խափանեաց. եւ եկեղեցիք քակեցին ի հիմնէ եւ քրիստոնէից արէնքն հանգարեց. եւ շատ դառնութիւն արար ի վերայ քրիստոնէիցս...» (Հայկա, Թ. 30. Սիւրմէեան, Յուցակ, էջ 68):

1489. ի Ծառուան (Ռշտունեաց). «Յաշխարհակալութեան Աղուր (տպ. Աղութ) զանին, ի դառն եւ ի վշտաբեր ժամանակի, յորում միահամուռ ամենեքեան ընթացան զհետ ոչինչին... եւ դարձան ի մոլոր օրէնս Մահմէտի... եւ բռնադատեն զամենեան՝ զմանկունս եկեղեցւոյ դառնալ ի սնտոի եւ ի պատիր յոյան իւրեանց, հալածեն, նեղեն եւ ստաւապեցուցանեն. զամանց ինչսն յափշտակելով, զոմն տանջելով, զոմն հայհոյելով. եւ ոչ այնու վերջացան. այլ եւ զբազում եկեղեցիս տապալեցին եւ զխաչն եւ զաւետարանն նախատեցին» (Լալայեանց, Ազգագր. Հանդ. ԺԲ., էջ 168—169):

1491 յԱղթամար. «ի դառն եւ ի սաստիկ տրամութեան ժամանակի... որ ելեալ ոմն անիծեալ ի յԱստուծոյ Սոփի անուն ի Թաւրիզոյ եւ եկեալ բազում զաւրաք ի Վան քաղաք եւ աւերեալ եւ զբազումս յաւար եւ զերի արարեալ եւ զսպաք եկեղեցւոյ եւ զԱւետարան եւ զամենայն սրբութիւնն եւ զգրեանքն տարեալ զերի: Եւ ո՞վ կարէ պատմել զաւերն զոր արար...»

Եւ գնաց Սուլիմայ Բէկն զհետ եւ կոտորեաց զնա ի դաշտին Վանայ. եւ կորեաւ անիծեալն յԱստուծոյ Սոփի անունն այն» (Երուսաղէմ, Թ. 1741):

1493. յԱղթամար. «ի դառն եւ ի վշտաբեր ժամանակիս. քանզի երեք ամ է որ աշխարհս անաէր է ի փաթշահէ. եւ յայտ ամի թագաւորեաց Ընրստամ փաթշահն, եւ ոչ զխոսմք թէ այլ ի՞նչ տի տեսնուի. զինչ տեսաք ո՞յլ Աստուած տեսնուլ շտայ. եւ այս բաւական է» (Լալայեանց, անդ, էջ 519—520): Ռոստոմ կը յիշուի նաեւ 1497ին:

1497. Աղթամար. «ի դառն եւ ի վշտալից ժամանակիս. յորում ի խիստ եւ ի նեղութեան եւ ի շար ծառայութեան կամք ազգին նետողաց, զի յոյժ կեղեն եւ կեղեքեն զազգս քրիստոնէից» (Էջմիածին, Թ. 158): Տես յամն 1486:

1499. Ասպիտինակի զիւղ Քաջբերունեաց. «Յայտ ամի... ի ձմեռնային ստոնասարոյց ժամանակի, որ էր աւր փետրուարի հինգն, եղև փորձութիւն նեղութիւն Հայոց ազգիս. զի արեանարբու եւ զազանարբոյ զօրքն Իսմայելեան եւ հեծեալքն Պարսկաստանեայ շրջեցան ի Հայաստան աշխարհն՝ նախ ի գաւառն Վասպուրական ի Վան եւ յՈստան անթիւ բազմութիւնք հեծելոց, որ էր ԺՌ. ընդ իւրեանս ունելով զնորընծայ փառշահն զԱլուանդ. եւ կացին անդ ԺԵ աւր՝ ուտելով եւ առնելով, ձեծելով եւ խլելով զրկեցին զսաւապեալ ազգս Հայոց: Եւ անտի ելեալ ապա եկին ի գաւառս Քաջբերունոյ, անհամար ազգ թաթարաց, եւ եկեալ նստան եւ ձմեռնացան քաղաքովն եւ երկրովն: Եւ ի սաստիկ ցրտաստոյց եղանակին զմարդ եւ զանասուն ի տանէն հանէին եւ ինքեանք մտանէին ի ներքս զբաստօքն իւրեանց եւ զկերակուրան, զոր ամբարեալ էին մարդոց եւ անասնոց՝ զամենեան ըմբռնեցին եւ տարին եւ նոյաւ ոչ բաւացան, սկսան չարչարել զքրիստոնեայան վասն խոտի եւ

յարդի, զարոյ եւ զինոյ եւ վասն կերակրոց եւ ըմպելոց: Այլ եւ բազում հարձ (խարձ) ձկեցին ի վերայ քրիստոնէից. որ եւ ի զլուին 2000 դահեկան եւ բազում տանջանօք շարժարէին զքրիստոնեայս» (Նոր Զուլայ, Ծրչկան զիւղի Աւետարան. Ս. Տէր-Աւետիսեան, Յուցակ, Թ. 80. հմմտ. Տէր-Յովհաննան, Պատմ. Նոր Զուլայի. Բ. էջ 304—305):

1499. յԱղթակ. «ի դառն եւ ի նեղ ժամանակի, զի ոչ կայր փաթշախ եւ ազգն Մարաց (Քուրդք) աւերեցին եւ քանդեցին զՅիշատ (°), զՍալմաստ, զԱխրակ, զՎան, զՈստան եւ զԱղթամար» (Լալայեանց, Յուցակ, էջ 526—528):

1499. յԱրժկէ. «ի դառնութեան Արխանդ Բէկին եւ զօրավարին Իպայ (°) սուլթանի. յայտ ամի յորում աւերեցաւ մեծ կաթնօղիկէն Էջմիածինն. եւ կաթնօղիկոսն տէր Սարգիս փախստական եղև. եւ զօրացան Մարք եւ առին զԱղթամար եւ զԲաղէշ հրով սրբեցին» (Աւետարան Օճախ զեղջ Ծիրակայ. Պոտուրեան):

1500. յԱրժկէ. «Արդ զբեցաւ սա ի Թուխ Հայոց Ձեթ. ամի, ի դառն եւ զժար ժամանակի, որ Թաթարից փառշահութիւնն խարաներ էր եւ Աղօլուցոց ազգն յերար անկամ էին. եւ պարսնութիւն սոցա ոչ հաստատէին. եւ աշխարհս կայր յերեմանի. վասն զի միմեանց ոչ հնազանդէին եւ յերեք չորս զիմաց բաժանեալ էին փառշահութիւնն. եւ զմիմեանս կոտորէին: Եւ շատ հայ եւ թուրք թալանեցան, եւ զեղք եւ քաղաքք աւերեցան. եւ ազգք Քրդաց կոտորեցան եւ սպանեցան» (Երեւան, Թ. 135):

1501. Արժկէ. «Արդ զբեցաւ սա ի դառն եւ ի նեղ ժամանակիս Աղղօլուցոց. զի էր նոցա զլուխ եւ առաջնորդ Ալուանդ հան. եւ ելեալ ի Թաւրիզու բազում զօրք եւ եկ նստաւ յԱլաւաղն. եւ առաքեաց զօրս իւր ի վերայ Խլաթու. առ եւ թալան արարին զերկիրն ամենայն. այնպէս խեղջ թալանեցին, մինչ զի զկանաց վարսերն կարէին եւ շորեր տանէին...: Չի յայտ ամի առաւ Եղզիշէրն զՎանայ ամուրն եւ բազում աւերք արարին երկիրն եւ քաղաքին» (Տիւրիզէն, Թ. 27):

1502. Արժկէ. «ի դառն եւ ի զժար ժամանակի, որ կամք յերերի՝ ե ի տատանի, զի ազգն Սօփիաց ելին ի Ձեթ (1500) թվին եւ զօրաժողով արարեալ ի յերզնկայն եւ զի-

մեալ ի յարեւելս՝ հասին ի դուռն Արանայ եւ աւեալ զճամախի եւ զամենայն տունն Ծրւանայ որ են Աղւանք եւ նստան անդ տարի մի եւ արարին շատ աւերք: Եւ ոյժ տուեալ անտի զիմեցին ի վերայ Ալւանդ փառիշահին Թաւրիզոյ եւ ի զիմի հարեալ կոտորեցին զնա յանինայ եւ փախստական արարին. եւ ինքեանք առեալ զթախթն Թաւրիզոյ նստան. եւ տիրեաց Կարմիր-Գտակն Ատրպատական տանս: Եւ ի միւս ամին զարձեալ զնային յերզնկայն հետեւեալ տարին. եւ նա եւս եւ անտի փախուցեալ զայ ի Թաւրէզ եւ անտի էջ ի Պաղտատ. իսկ Սօփին զարձեալ եկն ի Թաւրէզ եւ կալաւ զամենայն աշխարհս եւ արարին շատ աւերք. եւ բազում արեան հեղձուիք. եւ անինայարար կոտորեցին զազգն Ճաճկաց յամենայն սեղիս՝ զայնուսիկ որ զինուորք էին լեալ: Եւ եկեալ ի յԱրժկէ եւ յԱրժկէ նստան եւ երկու անգամ թալանեցին եւ թողեալ զնային: Իսկ Քուրթն ի կողմանցն Բաղիչոյ եկեալ էսո զԱրժկէ եւ ամբացաւ անդ: Յետոյ եկեալ Սօփին եւ եղև ամբացաւ անդ: Յետոյ եկեալ Արժկէ եւ եղև շատ կռիւս եւ աղմուկ եւ այլ ոչ կարաց տունու ի Քրտոյն: Եւ քաղաքն եւ բերդն մնաց ի շատար յաշնանէ մինչեւ ի դարուն: Եւ զերկիրն առեալ Կարմիր-Գտակն եւ նստաւ. եւ այնչափ ճշդիւ մալ էսո ի քրիստոնէից, մինչ զի այլ ոչ մնաց զինդ եւ ապարանջան յականջս եւ ի ձեռս կանանց. եւ ոչ զգեստ եւ ոչ զարդարանք: Եւ կողոպտեալ եղև յընչից եւ ստացուածոց. եւ եղև ամենեքեան այր եւ կին իրր զգերոյ տէր, պատաստուն եւ հնտոի հանդերձիւ, դառն եւ տխուր կերպարանօք...» (Ճառընտիր Մշոյ Առաքելոց վանքի):

1504. ի Մուշ. «ի դառն եւ ի շար ժամանակի վասն բազում մեղաց մերոց մատնեալ է զմեզ Աստուած ի ձեռն օտար եւ այլազէմ արեանարբու ազգին, որ Կարմիր-զլուխ Սօփի ասին: Որ ինչ անդ որ գնացին, զամենեան անողորմ ի սուր քարշեցին, զերեցուցին եւ թալանեցին, եւս առաւել զթուրքաց ազգն, զորս սպանին եւ զորս փախստական արարին եւ զաշխարհս Հայոց աւերեցին եւ անմարդարեակ արարին. եւ յայտ ամի զերկիրն Աղրակայ զազոյ արարին. զայրս եւ կանայս սրով կոտորեցին եւ զանմեզ տղայս զաղջկամարդսն զերեցուցին: Եւ ի սոյն աւուրքս զՎան եւ զՈստան աւերեցին. եւ կրկին պատուհաս շարժեալ է ի վե-

բայ աշխարհիս՝ մահ տարածամն... (Աւետարան Միւլք զիւղը):

1513ին Կարապետ Բաղլիշեցի կ'ողորար:

Պիտէր այժմոյս Երեմիա, շատ ողբասացք եւ լալական զի ողբային զազգըս Հայոց, որ յայտարիսի զբրունս հասան. ձգեցին զերկիրս ի պահանջման, եւ հարկս առնուն առանց սահման. երկիրս եղեւ որպէս խոպան, եւ ամենայն անձն ի դողման: Այսպէս եւ մեք եմք ի տանջման ընդ ազգիս Հայոց թշուառական. զի յամէն օր որ լուսանան, միշտ պահանջողքն կան եւ գան. Ոմանք առեալ յետս ընթանան, ոմանք նըստեալ առնուն յաման. ոմանք նոր բերեն նըշան, խնդրեն ցորեան եւ դահեկան: Աշխարհս եղեւ յոյժ ցիր եւ ցան, ի ստացուածոց աղբատացան. ի յայտ ամի թըշուառութեան կամք որպէս նաւ ի յերերման. Բընաւ չունիմք հանգստարան, այլ հողմահար եմք ի դողման...:

(Ալիւնեան, Մատենագրական Հետազոտութիւններ. Գ. Վիեննա 1938, էջ 346—347):

1530. Արծկէ. «Ի թագաւորութեանն Գահման (Թահմասպ) փաթշահին, որ յայտ ամի գնացեալ է Պորասան ի վերայ Բաշապաշին, եւ ի պարոնութեանս մերոյ Չապասոյթանին, որ նա այլ գնաց ի Պորասան. եւ մնաց ինքն անպարոն. գոր լուեալ Ղազի Ղըռան, թէ անտէր է վերին աշխարհս եւ ելեալ ի Հոռմանց տանէն. եւ մեք լուեալ փախստական եղաք եւ յաշխարհէ յաշխարհ չըջեցաք: Ի յԱրծըրիոյ մինչեւ ի Թավրէզ մեծ վրդովումն եղեւ երկու ամիս. եւ Ղազի Ղըռան եկեալ ի յՍասան ի ներս առաջնորդութեամբն Շարաֆ պար(ո)նին եւ գնացին ի յՈրմի: Շարաֆ բէկն ի յետ դարձաւ. եւ Ղազի Ղըռան կացեալ քանի մ'օր եւ խաղաղութիւն արար խարէութեամբ եւ յանկարծ գիծեալ ի վերայ Որմու օշնու եւ զազայ արար եւ գրագումս գերեցուց եւ մեք լուեալ ասարեկ եղաք...» (Էջմիածին, Թ. 962. հմմտ. Հանդ. Ամս. 1930, էջ 45—46):

1530 եւ 1533. Յովսէփ Աղթամարցի ի Լիւմ կը գրէ. «Ի թագաւորութեանն Գահման Կարմրազտակի. ի դառն եւ ի չար ժամանակիս, որ յանիրաւ հարկապահանջութենէ այլազգեաց շատ գեղորայք անմարգարնակ եղեն ի շարութենէ անխմաստ բռնաւորաց» (Երուսաղէմ, Թ. 302 եւ Էջմիածին Թ. 945):

1534. Վան. «Ի սոյն ամի... սոյլթան Սուլեմանն եկաւ ի վերայ Կարմիր-գրակին եւ նա ոչ կարաց զղէմ ունել՝ փախեալ յԱրեւելս. իսկ նորա հետամուտ եղեալ եւ էառ զբազում քաղաքս, ընդ նմին եւ զՎան քաղաք... եւ զնաց մինչ(եւ) ի Սօթմանիա, դարձեալ ի յետ՝ զնաց ի Բաղդաստ եւ զմեկն անդ եկաց: Եւ Կարմիրգրակին դարձաւ ի վերայ Վանայ եւ չորս ամիս խաւրեաց. աւախ եւ վա՛յ է զիս հազար բերան, թէ ո՛րքան անձինս կորեան, հաւատացեալ եւ անհաւատ. զի կարծիս էր թէ քան զվեշտասան հազար անձինս մեռան, աւելի եւ ոչ պակաս» (Վիեննա, Թ. 138. Տաշեան, Յուցակ, 434):

1538. Մարտիրոս զբիչ. «Ի թշուառ եւ ի չուար ժամանակիս, յորում է արդարութեան կողմն նուազեալ եւ անիրաւութիւնն յամենայն կողմանց զօրացեալ» (Աւետարան Կան զիւղի. Քօսեան, Յուցակ ձեռագրաց Կարնոյ զիւղերու, Թ. 25):

3. ՄԻՋԱՎԱՅՐԸ

Աղթամար Վանայ ծովին մէջ ցցուած սպառաժուտ կղզի մըն է. Ոստան քաղաքի զիմաց, ցամաքէն ասպարէզներով հեռու, անարդիւնարեր, անմշակելի: Գ. դարուն Ռչտունեաց իշխանին «ամբոցն»¹ էր այն իբրեւ անմատոյց, «անառիկ», կը ծառայէր ան հարածուածներու եւ փախստականներու համար տեղի ապաւինի եւ թաղստոց²:

¹ Փաւտոս, Գ. 8:
² Թէոդորոս Ռչտունի 640ին «չինեալ զԱղթամար կղզի՝ անդ սպրեցուցանէր զբազում գաւառս» (Սերիոս, էջ 103). 652ին «Թէոդորոս Ռչտունեաց տէր զարանակալ եղեւ Աղթամար կղզի, ինքն եւ փեսայ իր Համադասոյ Մամիկոնիէց տէր» (անդ, 143. հմմտ. նաեւ էջ 146): 966ին այս տեղ աբսորուեցաւ Ստեփանոս հակառակաթոռ կաթողիկոս (Ստ. Առողջիկ, էջ 182). այս տեղ ամբայս Վահան կաթողիկոս «ի ժամանակս հարածանացն» (Վարդան, էջ 116): Կը պատմէ Պաշտուր Ջուղայեցի, թէ Շէկի Հայդարի որդին «մտնուին իմայել փախուցանի ի հաւատարմաց ոմանց ի կղզին Աղթամար. եւ անդէն սնուցեալ հասանէ ի յարբունս հասակի: Յայնժամ առեալ զնա ազգականացն բերեալ յայտնեն ամենեցուն, թէ ահա այս իմայել է երկուց կողմանց ժառանգ թագաւորութեան, զի որդի է Շէկի-Հայդարին» եւ թուն Ռչտուն Հասանին (Վա-

Թ. դարուն շինեց հոն Գաղիկ թագաւոր Ս. Սաչի հրաշակերտ եկեղեցին, որ եղաւ այնուհետեւ եպիսկոպոսանիստ եւ 1113էն սկսեալ Կաթողիկոսարան: Փախի տարինեւրուն ծովեզերեայ բնակիչներու գոյքերուն պահեստի տունն էր:

Յամաքին հետ հազորդակցութեան մէջ էր նաւերով. ուսկից կը հայթայթէր իր պարենը: Կաթողիկոսարանը ունէր կալուածքներ ցամաքի վրայ. կը ստանար թեմականներէն որոշ հասոյթ:

Աղթամար երբեք վանական հաստատութիւն չէ եղած, ինչպէս եղած են Լիւմ եւ Կուուց: Ան էր եւ մնաց վարչական կենդրոն: Իբր այդպիսի ունէր վարչական անդամներ, պէսպէս աստիճաններով: Զէ վկայուած, թէ Աղթամար ունեցած ըլլայ Դպրոց: Կաթողիկոսարանը իր կղերականները կը պատրաստէր ցամաքի վրայ հաստատուած վանքերու մէջ (Ոստան, Մեծոփ, Արծկէ, Արճէշ): Եւ Լիւմ կը յիշուին «Աղթամարցի» եկեղեցականներ, անոնք ոչ թէ ծննդեամբ, այլ բնակութեամբ այս յորջորջանքը ստացած են:

Թէեւ աշակերտութիւն չէ ունեցած Աղթամար, բայց այդ միայնութեան մէջ զբոսուած են քահանաներ, որոնք պարատպած են զբնութեամբ, մանրանկարչութեամբ եւ կազմարարութեամբ: Անոնց թուին մէջ նշանաւոր եղած են Յակոբ Ջուղայեցի եւ Յովսէփ Աղթամարցի. վերջինս շատաշքիլի եղած է. զինքը կը տեսնենք Աղթամար, Արզելան, Լիւմ եւ այլ քաղաքներ եւ վանքեր:

Այս շրջանին Աղթամարի կաթողիկոսներ եղած են.

Ստեփանոս	1465—1489
Չաքարիա	1489—1496
Ատոմ	1496—1510
Յովհաննէս	1510—1512
Գրեգորիս Ա. Մեծ	1512—1544
Գրեգորիս Բ. Փոքր	1544—1586:

Մարտարոս ժամանակը, որ վրդոված էր քաղաքական կեանքը, ազդած էր նաեւ զարշապա, 1905, էջ 96): Շահ-Իսմայէլի ծնունդը կ'ենթադրուի 1480ին (A. Müller, Der Islam im Morgen- und Abendland, II, Berlin 1886, էջ 348). Կրտսի թէ երբ Ալի, Շէկի-Հայդարի երէց որդին իր 1495ին ինկաւ պատերազմի մէջ, Իբրահիմ եւ իմայէլ փախան Գիւլան (անդ, 349): Ուստի «մանուկն իմայէլ» Աղթամար բերուած եւ պահուած ըլլալու է 1490—1495 տարիներուն:

Աղթամարի վրայ: Հօտը հարստահարուած, գերի վարուած, թալանուած, չքաւորուած, Հովուին ուղղած էր իր արտոնալից աչքերը. իսկ Հովիւը անգոր էր միտիթարութիւն բաշխել. ինքն ալ սպառնալիքի տակ էր:

Աղթամարցի մը կը գրէր 1491ին թէ «Սոֆի անուն ի Թաւրիզոյ... եկեալ ի յՈստան քաղաքն եւ անտի եկեալ հրոխալով նստաւ ի դաշտն Գաւաշիցն դէմ յանդիման տեղուոյս (Աղթամարայ). եւ զայրանայր ի վերայ մեր որպէս զգազան պիղծն այն եւ բազում շարիս խորհէր, թէ առնում զտեղն եւ զամենայն սրախողխող առնեմ եւ զսրբութիւնն քակեմ: Որով սաստեալ սուրբ Սաչն զօրութեանց՝ յետս դարձոյց զնա» (Երուսաղէմ, Թ. 1741):

1499ի սաստկաստոյց ձմեռը, փետրուարին, երբ սառած էր ծովին մակերեւոյթը, ընդունեցաւ Աղթամար վայրագ Քուրդերու այցելութիւնը. ժամանակակից մը ի Ոստան կը գրէր. «Ի վերջին դարիս եւ ի յայս դառն ժամանակիս ի թվ. ԶՈԼ. Քուրթն էառ զանառիկ կղզին զԱղթամար... եւ բազում աւերս արար եւ անչափ մալ ու մանդրուն՝ հայի եւ տաճկի, օտարի եւ բնականի թալանեաց եւ տարաւ. ընդ որս եւ զսուրբ Աւետարանս զայս տարան ի Շատախ» (Լաւրյեանց, Յուցակ, էջ 317—318): Ուրիշ մը ի Հիզան կը յիշատակագրէ. «Ի դառն եւ ի նեղ ժամանակիս, զի աշխարհս ամենայն ի յերերման կան. զի ոչ թագաւոր կայ եւ ոչ իշխան, զի որդին էր զընչըն Չէհիգ բէկն եմուտ ի յԱղթամար» (Վենեաիկ, Թ. 130. Սարգիսեան, Յուցակ, Ա., էջ 576):

Հարստահարութիւնները շարունակուեցան ինչպէս Շահ-Իսմայէլի, նոյնպէս Շահ Թահմասպի օրով:

4. ԺԱՄԱՆԱԿԱԿՑ ԵՐԿՈՒ ԴԵՄՔԵՐ

Գրիգոր Վ. Արեւիշեցի: Երեք անգամ կը յիշէ զինքը Գրեգորիս իր տաղերուն մէջ իբրեւ «երջանիկ բարունապետ Գրեգորիս անուն, արթուն հսկող, քաջ հոետոր եւ անյաղթ փիլիսոփայ եւ երիցս երանեալ մեծ վարժապետ» (ԺԶ.) «Գրեգոր մեծ բարունի» (ԺԲ.), «մեծ բարունապետ որ եւ անուն նորա Գրեգոր յորջորջի» եւ այլն: Դժբախտարար այս որակական բառերու տարափին մէջ չենք գտներ որ եւ է նշմար անոր անձնաւորութեան մասին: Ո՞ր Գրեգոր վարդապետը

կանխարկուի ժամանակակից համանուններին: Ժամանակը կը մասնանշուի 1515 և 1516, 1519: Ինձի ծանօթ են 1511էն Գրիգոր վարդապետ Ի Վարագ, որ Կարապետ արքեպիսկոպոսին աթոռակից կը ներկայացուի (Էջմ. 2582): 1513էն Գրիգոր մեծ վարժապետ Խառարաստայ վանքին մէջ (Ուլստալ, Macler, Rapport 181—182), Գրիգոր Վ. Արճիշեցի, որուն համար կ'ըսուի թէ Յովհ.

Յովսէփ Աղթամարցի: Յովսէփ կրօնաւոր է լուկ Աղթամարի մէջ. ան շրջած է վանքէ վանք և պարտադր գրչութեան և ծաղկարարութեան արհեստներով: Կը սիրէ նաև արտայայտուիլ տաղաշարիչ: Առաջին անգամ կը յիշուի իր անունը 1497ին: Ան կը կոչէ ինքզինքը Աղթամարցի: Հայրն էր տէր Աւագ, մայրը՝ Մէհրիար, եղբարք՝ Աստուածատուր և Աղիզբէկ, որոնք 1497էն



Պատկ. 1. Ձեռ. Էջմ. 3534, 13բ—14ա:

Համբնցուց աշակերտը եղած է և 1480—1483 տարիներուն դասախօսած է Երուսաղէմ (Եղմ. Թ. 352. Աղանունի, 95). ապա գործած վասպուրական: Սա կոչուած է Չորթի Գրիգորիս ուսուցիչը: 1499ին կը յիշուի Աղթամար գրուած Մաշտոցի Յիշատակարանի մէջ Թումա գրչին. կ'ըսուի. գրեցաւ «յաստուածարնակ կղզիս Աղթամար... Ի սաղոց և յընտիր աւրինակէ, գոր սրբազրեաց և փարթամացոյց (այսինքն նկարագարդեց) մեծ հետտորն Գրիգոր վարդապետն, բաջն և արին» (Էջմ. 1684): Սա կարող է նոյն ըլլալ Արճիշեցուց հետ, որ իբր 1483ին Երուսաղէմէն վերադարձին կարող է Աղթամար գաղար ստած ըլլալ: Տես իմ Բաղէշի Դպրոցը, էջ 22—25:

յառաջ հանդուցեալ են, և Շաքարբէկ և Աւրան: Գրչութեան և նկարչութեան արհեստները ուսած է Արգելանի վանքին մէջ տէր Կարապետ Բերկրեցուց քով. հոս կ'օրինակէ 1497ին Շարահնոց մը Ստեփաննոս կրօնաւորի համար. «Գրեցաւ սա, կ'ըսէ, յերկիրս Տարբերունուց ի սուրբ մենաստանս, որ կոչի Արգելան... Ի թվականութեան մերոյ 202 ամին. արդ ևս յետինս ի մանկունս սուրբ եկեղեցուց... Յովսէփ սոսկանուն կրանաւոր... աղաչեմ յիշել ի Տէր զհոգեւոր հայրն և զկրկին զծնաւորն իմ յիմաստս գտէր Կարապետ Բերկրեցին, որ բազում աշխատութեամբ ուսոյց մեզ զարուեստս՝ զշինել մաղաղատիս և զգրել սորին. այլ և զնկարելն. որ և ընդ հովանեաւ սորա ծաղկեցի զսա ոսկով և բազմերանդ

գունով» (Բերկին, Ms. Or. oct. 2068): Նոյն տարւոյն կը վերագոնուց Աղթամար, ուր Մատթէոս կրօնաւորի օրինակած Աւետարանը կը նկարագարէ. կ'ըսուի. «յիշեցէք ի Գրիստոս զՅովսէփ կրօնաւորն որ յոյժ աշխատութեամբ նկարեց զսուրբ Աւետարանս» (Էջմ. 158, թղ. 362ա. հմմտ. ՀԱ. 1930, էջ 53) և երկրորդ մը Էջմ. 3534: 1503ին (տեղը անձանօթ) կ'օրինակէ Տօնացոյց՝ Մանրուսմունք մը. «Աստուած ողորմի սասցէք ինձ մեղաւորիս Յովսէփի» (Էջմ. Թ. 2033): 1512ին Մկրտիչ կրօնաւորի համար կը գրէ և կը ծաղկէ Շարահնոց մը յԱղթամար (Վենետիկ, Շարահնոց Ե): Նոյն տարւոյն սերի մը՝ Յովհաննէս կրօնաւորի համար, նոյնպէս Աղթամար (Վենետիկ, Շարահան, ՀԹ.): 1530ին կը լրացնէ կիսակատար մնացած Մաշտոց մը ի Լիմ տէր Պարսաֆի և տէր Գրիգորի համար, որուն վերջաւորութեան նուիրած է սասցոյդներուն ոտանաւոր չափով մաղթանքներ և Մաշտոցի դովքը (Երուսաղէմ ըստ Խապայեանի Յուլիանի. Թ. 302, թղ. 286բ յիշատ. և 299ա ոտանաւոր): Այս տեղ և նոյնպէս Լիմ 1533ին գրուած Հայր Մաշտոցի մէջ կը ներկայացնէ ինքզինքը «արեղայ» (Էջմ. 945. Հանդ. Ամս. 1930, էջ 51): Հաւանօրէն հոս ի Լիմ և կամ յԱղթամար ծաղկած է Յովսէփ Աղատ խոճայի Աւետարանը, որ գրուած էր Չաքարիա գրչի ի վան 1533ին. խոճա Աղատի նկարին տակ կը կարդացուի. «Աստուած ողորմի Յուսէփ ծաղկողին»:

Յովսէփ Աղթամարցի արեղան կ'երեւայ թէ 1533էն ետքը վարդապետութեան պատուի բարձացած է. և այս առիթով նուիրած է իրեն Գրիգորիս իր ԹԱ. տաղը, ուր կ'անուանէ զանիկա «ղխտութեամբ որպէս զծով», և «սուրբ և մաքուր հայր պատուական, ազգի պարծանք և աննրման, որ միշտ զընալ յաւրչնս Տեառն խոկայ, զանձիւզրոց միշտ ճոխանայ»: Զինքը լաւ կը ճանչնայ նաև Չաքարիա Գնունեցի, որ իր մէկ տաղին մէջ կը կոչէ զանիկա «Վարդապետ սխրալի, տէր Յովսէփ Աղթամարցի» (էջ 47) և 1538ին անոր ընծայած Չօրք անմարմնոյն տաղին խորագրին մէջ «զօրութիւն ումեմն Վարդապետի» (Չաք. Գնունեցի, էջ 43—45):

Իր մօտ սորված են Գրիգորիս Աղթամարցի և Չաքարիա Գնունեցի մանրանկար-

չութեան արուեստը: Իր աշակերտներէն մէկն էր նաև Սարգիս գրչի, որ 1566ին գրած Աւետարանին մէջ կը խնդրէ յիշել «զուսուցիչն իմ զշնորհազարդ և զբանիբուն Յովսէփ վարդապետ Աղթամարցին»:

Յովսէփ Վ. Աղթամարցի վախճանեցաւ 1544ին: Չայս կը հաղորդէ մեզի Չաքարիա Գնունեցի, կցելով. «Եւ ինձ սուգ եղև անբուժելի» (էջ 47 և 7):

Յովսէփ աւելի գրչութեան և մանրանկարչութեան քան գրական ստեղծագործութեանց հետամուտ եղաւ: Բայց և այնպէս հասած են մեզի իր գրչին մանր փշրանքներ, ոտանաւոր չափով. ասոնք են.

1. Ի Յովսէփ վարդապետէ Աղթամարցույ սասցեալ:
Երկու վընաս կայ ահաղին...
Տ սող բան:
Հրա. Կ. Կոստանեանց, Նոր ժողովածու, Գ. 42:
2. Կաճայ (Պղնձէ քաղաքի պատմութեան մէջ). «Եւ սասց ալեւորն գայս Ողրս, ի Յովսէփայ Աղթամարցույ.
Գերի Աղամայ որդի...
Ընդ ամէնը 4 սող: Վիեննա, Թ. 977:
3. (Խրատ գրքերը լաւ պահելու).
Ով սիրելի եղբայր որ ևս,
տամ քեզ խրատ որ լսես,
Զընի թէ զմատղջ թըբոտես
և ասպա զթուխտըն շրջես:
= Էջմ. 945: Հրա. Հանդ. Ամս. 1930, էջ 52:

ՄԱՍՆ Բ.
ԳՐԻԳՈՐ ԱՂԹԱՄԱՐՑԻ ԱՆՆԵՆԵՆ
ԿԵՆՍԱՎՐԱՅԱՆ ԳԻՏԻՐ

Թաղաւորական գարմէ կ'իջնոր մեր Բանաստեղծին տոհմը, ինչպէս կը գրէ Մարգարէ գրիչ 1534ին, «յարմատոյ և ի ցեղէն մեծ թաղաւորին Գոգկայ» Արժրունուց († 936): Պային անունն էր Սմբատ թաղաւոր, և մամին՝ Պանոյ բէկ խաթուն: Վերջին Չաքարիանք, որոնք Աղթամարի Կաթողիկոսական աթոռին վրայ բազմած էին, կը ներկայացուին իր «Տօրեղայցիներ»ը: Գրիստիս ինքնին կը խնդրէ յիշել.

«Եւ զազգատոհմն իմ միարան
Եւ զհօրեղբարքն իմ սրբազան»:

Մտրատ թագաւորին որդին էր Իսկենդեր (Աղեքանդը), որ կին կ'առնէ Շահումը: Այս ամուսնութիւնը օրհնուած է երեք արու դաւակներով, որոնք են. Գրիգորիս, Ամիր-Գուրգէն եւ Մտրատ: Գրիգորիս կ'ընտրէ եկեղեցական կոչումը, Ամիր-Գուրգէն ծովամայն կ'ըլլայ 1534էն ոչ շատ յառաջ. իսկ Մտրատ այս տարւոյն կը ներկայացուի իբրեւ «կանաչասաղարթ բարունակ», որ պատանի հասակին կը կորսնցնէ իր մայրը:

Աղթամարի կաթողիկոսութիւնը առհասկան ժառանգութիւնն էր «թագաւորական» տան: Գրիգորիս իբրեւ անդրանիկը Իսկենդերեան տոհմին որորանէն ընծայուած էր կաթողիկոսական կոչումին: Ան առաւ իր դաստիարակութիւնը առ ոտս Գրիգոր Վ. Արճիշեցւոյ: 1499ին կը յիշուի Աղթամար «մեծ հռետորն, քաջ եւ արի Գրիգոր Վարդապետ»: Գրիգորիս իր ԺԲ. տաղին մէջ անդրադառնալով իր ուսուցչին՝ կ'ուղղէ անոր սուրբս.

Շըրթամբդ աստուածարան դու ուսուցեր
զիս,
Որպէս ձուկն ի ծովէն՝ դու սընուցեր զիս:

1516ին կը յօրինէ Ս. Մարինոսի ոտնաչափ պատմութիւնը՝

Առ ոտս երջանիկ Բարունապետի,
Գրիգոր անուն արթուն հրակողի,
Քաջ հռետոր՝ անյաղթ փելիսփայի,
Երեցս երանեալ մեծ Վարժապետի:


Գրիգորիս ունեցած է երկրորդ ուսուցիչ մ'ալ, Յովսէփ Աղթամարցի, որ անուանի գրիչ էր եւ ծաղկող, նաեւ տաղերգոյ: Նուիրած է այս Վարդապետին յիշատակին ալ տաղ մը, որուն տողերու սկզբնազերներն եւ վերջագիծերը կը կապեն «Գրիգորիսէ Յովսէփին»:

Գրիգորիսի մօտաւոր նախնիքներու ճիշդագրութեան համար կարեւոր տեղեկութիւններ հաղորդած է մեզի Թումա Մինասեանց († 1471) ձառնարկի մը Յիշատակարանին մէջ այսպէս. Յիշեցէք, կ'ըսէ, «մանաւանդ պատգոյն (Ձ. ստացողի) սուրբ գրոցս զպարոն Մտրատն եւ զճնորան իւր զԱմիր Գուրգէնէն եւ զԳուրգէն խաթունն եւ զհօ-

րեղբայրն զտէր Զաքարիա կաթողիկոսն եւ զկենակիցն (Մտրատայ) զԲէկի խաթունն եւ զքոյրն իւր զԹանուս խաթունն եւ զնախնիքն սմենայն»:

Այս ճիշդագրութեան շարունակութիւնը աւանդած է մեզի Մարգարէ Արճիշեցի 1536ին. «Գրեցի զսա յիշատակ Գրիգորիս կաթողիկոսին եւ ճնողայ նորին Սքանդարին եւ Շահումին եւ եղբարցն Ամիրայ Գուրգէնէն... եւ միւս եղբորն... Մտրատին... այլ եւ հաւուն իւրոյ Մտրատ թագաւորին եւ թանոյրէկի խաթունին եւ արեանառու հօրեղբարցն սրբազան կաթողիկոսայն, տէր Զաքարեանցն»:

Այս աղբիւրներու վրայ յեցած կարող ենք կազմել ծառս.



Գրիգորիս իր հօր մասին յիշատակութիւնս ըրած է³.

Նաեւ զհայրն իմ պատուական
Զքաջն կարի, յոյժ աննըման (= Իսկենդեր),
Զոր եւ փրկիչն Յիսուս արքայն
Պահէ աջովն իւր անասան:

Գրիգորիս կը մարզուի իր ուսուցիչներու խնամքին տակ, կ'աւարտէ ուսմանց ընթացքը, եւ կ'ընդունի Վարդապետական Իշխանութիւնը. իր ԺԲ. տաղին մէջ կը գրէ.

Թէպէտ որ կարգացող անուն ունիմ ես:

Վարդապետական ուսմանց հետ կ'ուսանի նաեւ գրչութեան եւ նկարչութեան արհեստը: Կ'ընդլայնէ իր մտքի պաշարը, զոր կը շահագործէ ապա իր գրական ստեղծագործութիւններու համար:

¹ Վենետիկ, Թ. 226, Թղ. 38ր, նաեւ 61ա, 71ա չ. Բ. Սարգիսեան, Յուլիան, Բ., էջ 419): Մտրատայ «թագաւոր» յորջորջումը կը ստանայ առ այս ակն Ակիւնեան, Գաւազանաղիբը, էջ 111—114. եւ չ'անդ. Ամս. 1917/18, էջ 143—144:
² Լուսնայ, 1900, Ա., էջ 264, Տես վարը:
³ Յիշատակարան Պղնձէ քաղաքին. տես վարը:

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Աղթամարի աթոռին վրայ կը բազմէր 1496, օգոստոսէն սկսած Ատոմ կաթողիկոս, որ զահին վրայ էր տակաւին 1509/1510ին: Իր մահը պէտք է պատահած ըլլայ 1510/1511ին: Ժամանակակիցն Յովսէփ Աղթամարցի 1512ին Ատոմի յաջորդ կը յիշէ Յովհաննէս. այս տարւոյն զրած եւ ծաղկած է ան Շարակնոց մը. «Գրեցաւ եղանակաւոր տառս ի թուին Հայոց ԶԿԱ. (1512) յաշխարհակալ թագաւորութեան Տաճկաց կարմրադատակ շահ Իսմայէլին եւ ի հայրապետութեան տեառն Յովանիսի, յաստուածախնամ կղզիս Աղթամար, ձեռամբ անխմատ գրչի Յովսէփի» (Վենետիկ, Շարակնոց Ե. հմտ. Բագմավէպ, 1905, էջ 492): Նոյն գրիչը նոյն տարւոյն կ'օրինակէ երկրորդ Շարակնոց մ'ալ. «Գրեցաւ եղանակաւոր տառս ի թուին Հայոց ԶԿԱ. յաշխարհակալութեան Տաճկաց կարմրադատակ շահ Իսմայէլին... ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի յաստուածախնամ կղզիս Աղթամար, ձեռամբ անխմատ գրչիս Յովսէփի» (Վենետիկ, Շարակ. ՀԹ. հմտ. Բագմավէպ, անդ), երկու յիշատակարաններ բառ առ բառ նոյն, տարբեր միայն կաթողիկոսներու անունները: Զարմանալի է, որ գրիչը որ եւ է խօսք է ըրած, թէ նախորդ տարւոյն վախճանած է Ատոմ, յաջորդած է Յովհաննէս եւ անոր նոյն տարւոյն Գրիգորիս: Այս լրութիւնը չեմ կարող բացատրել: Յամենայն գէտս պէտք է ընդունինք, թէ Ատոմի մահէն ետքը աթոռակալ եղած է Յովհաննէս մինչեւ Գրիգորիսի գահակալութիւնը:

Գրիգորիս առաջին անգամ 1512ին կը յայտնուի Աղթամարի մէջ: Իր առաջին կեանքի մասին մեր տեղեկութիւնները այս թուականէն ետքը զրուած աղբիւրներէն ունինք: Յիշատակարանները կը լսեն 1512—1525 տարիներու համար: Ինչ որ զիտենք այս միջոցէն կը պարտինք իր տաղերուն, զորոնք զրած է 1515, 1516 եւ 1519 եւ 1523, 1524 տարիներուն:

1516ին կ'անուանէ ինքզինքը «ապիկար տեսուչ», որով կ'իմանայ անշուշտ իր «կաթողիկոսական աստիճանը. այս թուին յօրինած է Ս. Մարինոսի վարքը տաղաչափութեամբ. գրած է զայն «առ ոտս Գրիգոր... երեցս երանեալ վարժապետի»: Եթէ չուզենք այս արտայայտութեամբ գինքը տակա-

ւին աշակերտ ճանչնալ, հարկ է ապա իմանալ, թէ զայն յօրինած ժամանակ Գրիգոր իր քովն էր:

1524ին զրած տաղին մէջ կը զանգատի Յովսէփ Աղթամարցւոյ.

Երգեմ ձայնիւրս նուազ է,
Մոլորակամ եմ ի տանէ.
Գրիգորիսէ սա գրեալ է,
Ի քափառնիկ ումն աղբաւտէ:

Տուես ցոյց կու տայ, թէ Գրիգորիս այս տարւոյն հեռացած է Աղթամարէն եւ կը շրջի թափառական: Պատճառը տուած էր նախորդ տարւոյն «Ծաղկունքն ասեմ» տաղին մէջ, զոր զրած էր Աստուածատուր Մեծօրեցւոյ խնդրանքով.

Հաղարացիքն օրինօք թիւր
Զազղես խանձեն որպէս զհուր:


Շահ Իսմայէլի (1502—1523) եւ Թահմազ շահի (1523—1575) արշաւանքներու եւ ասպատակութիւններու դարն է. երբ Վասպուրական քարուքանդ եղաւ, երկիրը անախնայ մասնուեցաւ եւ Գուրգէրը գլուխ բարձրացուցին: Անպաշտպան քրիստոնէայ բնակչութիւնը եղաւ թալանի եւ կողոպուտի ենթակայ: Արդէն 1499ին կը գրէր յիշատակագիր մը. «... ի դառն եւ ի նեղ ժամանակիս, զի աշխարհս ամենայն ի յերերմանի կան. զի ոչ թագաւոր կայ եւ ոչ իշխան. զի որդին էր զընդլըրին Զէհրդ բեկն եմուտ ի յԱղթամար» (Բագմավէպ, 1905, էջ 493): Այս աղէտը կը կրկնուի 1523—1526 տարիներուն մէջ, երբ վարպետ Յակոբ Աղուեսագիրք մը կը գրէ Աղթամարի մէջ իբրեւ իր կողմէ ընծայ նոյն աթոռին համար. զրած է «կենօք տառապանօք, զի... առեալ էր զԱղթամար ազգն Շամուրից... իսկ բարեսէր կրօնաւոր վարպետն Յակոբ ժուժկալեալ գծագրեաց զսայ մեծաւ աշխատութեամբ. եւ հասեալ յաւարտ... խաղաղութեամբ հանդեալ ի Գրիստոս ի նոյն կղզին Աղթամար: ... իսկ ես սպերախտ աշակերտս եւ ըստ հոգւոյ որդի նորին Յովսէփ կազմեցի զսայ եւ եղի ի սուրբ խաչ Աղթամարայ, ըստ աւանդելոյ վարպետին մերոյ, յիշատակ բարի Յակոբ կրօնաւորին եւ ճնողայ իւրոյ Յովսէփին եւ Փաշին... կազմեցաւ գիրքս ի Լինն կղզիս ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի, ի թիվականիս մեր ԶՀԵ (1526), ի թագաւորու-

թեան Դահման (Շահ Թահմասպ) խիբրդին որդւոյ շահ Իսմայէլին» (Պալեան, Յուլյակ հայերէն ձեռագրաց... Ի Մանիսա. Չմիւնիա, 1897, էջ 14—15): Աղթամարի այս գրուածը անպայման տեղի ունեցած է 1523ին եւ տեւած է մինչեւ 1526, եթէ ոչ աւելի: Յակօր կրօնաւոր Չուղայեցին Գրիգորիսի եւ Յովսէփի նկարչութեան ուսուցիչն է:


Գրիգորիս կաթողիկոս հարկադրուած է հեռանալ Աղթամարէն, անշուշտ չենթարկուելու համար հարստահարութիւններու: Կերեւայ թէ վանքէ վանք «թափարկելով» հասած է Մեծօփ եւ այնտեղ դադար առած իր սասնջականն եղած է տեղւոյն առաջնորդն Աստուածատուր Մեծօփեցի, որուն խընդրանքով գրեց զողարիկ տաղն «Ճաղքունք սանն»:

1525ին ունինք իր ձեռքէն յիշատակագրութիւն մը, գրուած 1458ին օրինակուած Մաշտոցի մը մէջ. գրութեան վայրը չէ մասնանշուած.

«Ընդ առաջին ըստացողացն եւ զվերջին ստացող լուսադարդ տառիս՝ զբարէպաշտ եւ զհաւատարիմ ծառայն Աստուծոյ զԹաւաքարն եւ զկենակիցն իւր զմահդասի Նի[նի]զարն եւ զորդիքն իւր զՂարիպուլին, զՄերէթն եւ զհանկուցեալն ի Քրիստոս զՀաղնադարն, զԲաներգէսն եւ զկուսակրանն եւ զժրաջան կրօնաւորն զտէր Անդրեանն, այլ եւ զթոռներն իւր զԲենիկն, զՎ(եր)զին, զՍաղըզն. յիշեցէք ի Քրիստոս եւ լի բերանով եւ ուղիղ մտաւք Աստուած ողորմի սացէք յիշեցելոցս ի սմա, որ ընծանցին զսուրբ տառս ի դուռն Չուղա(Յ)ոյ, զի կացցէ անջինջ յիշատակ Թաւաքալին. ամէն: ՋՂԻ. գրեցաւ ձեռամբ Գրիգորիսի Աղթամարցոյ: Եւ զգասերքն իւր Սուսանբարն, զՂՂըլամէն եւ զՍուլթանն. ամէն. զՍանին» (Եջմիածին, Թ. 959, Թղ. 308ա: Հմմտ. Յովսէփեան, Հանդ. Ամս. 1930, էջ 44—45, ուր եւ տրուած է բնագիրը նմանահանութեամբ, զոր կը ներկայացնեմ նաեւ այս տեղ:



Պատկ. 2. Ձեռ. էջմ. 959, 308ա:



Պատկ. 3. Ձեռ. էջմ. 959, 308բ:

1526ին կը գտնուէր ան հաւանօրէն Սաւարաստոյ վանքը. հոս կը նկարագորդէ Աղեքսանդրի վարքը, որուն գրէն էր Մարգարոյ Արճիչեցի:

«Գրեցաւ է թվին ՋՂԵ ի դուռն սուրբ Աստուածածնիս Սաւարաստոյ, ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս Մարգարոյ վարդապետին եւ տէր Ստեփանոս արհեստակարարին...: Ընդ նմին յիշեցէք ի Քրիստոս զԳրիգորիս կաթողիկոսն Աղթամարցի, որ զօրինակն չնորհեաց. զոր ստուգեալ եւ

սրբադրեալ էր ինքն բազում աշխատութեամբ ի սխալ յաւերնակէ, եւ տասցեալ ի յառաջմտացն բէթ, թող զայն որ վանգով եւ երկու վանգով պակասէր՝ զթերին ելից. վասն որոյ յիշման արժանի արասջիք զինքն իւր ծնաղօքն. ամէն: Եւ զժողկազիրն անձանձիր ուսոյց ծառայիս եւ զզիրդ նկարեց: Ով որ ի ձեռն անուռ կարգալով՝ զԱստուած ողորմին մի՛ խնայեցէ Գրիգորիս կաթողիկոսին եւ անարժան զժողիս» (Մարգիսեան, Յուլյակ, էջ 1097—1098, որ 1869ին տրուած

մանի մեծի եւ տեսանող խմաստաւորին
Հայոց սուրբ վարդապետին Յոհաննիսի, մա-
կանուն Սարկաւազի... (այսպէս յոռաջ ի
բանից Գառնեցոյ):

Ով դու մըտաւարժ դրպիր, որ շնորհաց
ես աստիճական, թուեա՛ ըզտառիս համար,
և քննեա յոյժ խորհրդարար, որ է ի ներ-
քուսան սէ. Ե ի վերուստ ո է յանդիման.
այսքան համարովս եւ թիւ. ութ կանոն սաղ-
մոսն ի ըման. (Ապր գրուած է):

Ս
(Ո)

և հակառակ ուղղութեամբ՝ գրուած կրկին
Ո՞վ դու մտաւարժ... ի ըման»: Ապր
«Աւերհոութեամբ ծանիք հոգեւոր որդիք, որ
սուրբն Գրիգոր լուսաւորիչն մեր յորժամ
զՀայոց ազգս ի հուստոս երեք եւ կարգ սահ-
մանեաց: Եւ յերկրի քահանայս եւ եպիսկո-
պոսոսն եւ օրինաւոր հասկ (հասք) եւ իրա-
ւունք հաստատեաց: Եւ զոր տեսեալ եմք ի
զրոց եւ ի կանոնաց սրբոյն Գրիգորի, այս է.
Զպողոսն. Զսրբադրամն եւ թէ զինչ է սրբա-
դրամն. ի յամէն շունչ Ա. դրամ: Զտեսնա-
կանն. Զկենդան. մատղին. Զյանկարծամա-
հիցն: Զտանց քահանայիցն. եւ զընտանեաց
նոցա. եւ զքահանայիցն: Զմեռելի բազմա-
կանն եւ զկողոպուտքն. եւ զհոգեւոյ բաժինն:
Զայս ամենայն տան ի վանքն: Եւ այն սար-
կաւազն որ երկցացու է. նորա պսակադրամն
և զուստ աւերհոն եպիսկոպոսին է: Եւ այս
յամենայն տեղիք հաստատուն կայ»:

ՆԱԿՐԻՉԸ

1536ին Մարգարէ Արճիշեցի կը ձեռ-
նարկէ երկրորդ անգամ օրինակել Աղեքսան-
դրի վարքը, զոր կը պատկերագրուի Գրի-
գորիս: Զեռագիրը պահուած է Երուսաղէմ,
թ. 473: Զեռագրի մանր նկարագրութիւնը
տուած է Գարեգին արքեպ. Յովսէփեան,
Արարատ 1919, էջ 11—14: Քաղուածարար
կը ներկայացնէմ հոս կարեւոր տեղիքներս:
«Մի շարք յիշատակարաններէց կամ լու-
սանցքի նկատողութիւններէց պարզուած է,
որ ձեռագրի գրիչն է Մարգարէ Արճիշեցին,
որ 1536 թուին ապրում էր վարադում. եւ
այս տեղից մաս մաս ուղարկուած իւր գրած
Աղեքսանդրի պատմութիւնը Գրիգորիսին
նկարագրուելու: Բայց Աղթամարցին բո-
լորը է նկարագրուել, այլ մինչև 33րդ

երեսը. մնացած տեղերում պատկերները տե-
ղերը բաց են մնացած, թէև գրչի ցուցում-
ներն ու նկատողութիւնները Գրիգորիսի ա-
նունով շարունակուել են մինչև վերջ. սա-
կայն ինչ որ կայ, այն էլ կարեւոր նշանա-
կութիւն ունի մեր մանրանկարչութեան
պատմութեան համար»:

Զեռագրի մէջ. «պատկերների տեղը
գրչի կողմից բաց է թողնուած եւ լուսանց-
քում, Երբեմն նաեւ բնագրի մէջ, ցուցում-
ներ գրուած կամ բնագրի բովանդակութիւնը
մատնանշուած, որի համեմատ պէտք է նկա-
րուէին պատկերները»: Այսպէս.

Թ. 7ր. «Ծաղիկ դաւան հան». եւ նկա-
րուած է Փիլիպոսը նստած, թռչունը գողին
ձու է անում. իսկ վիշապը առաջին՝ բնագրի
բովանդակութեան համեմատ: — 10ա. «Ծա-
ղիկ հան, ով փառաւոր եւ հրաշագործ հո-
գեւոր տէր, որպէս եւ պատմութիւնդ վկայէ.
և զքո ոտաց մոխիր Մարգարեկս յիշելով
արժանի արա ի տէր»: Նկարուած է ձի,
գլուխը եւ ոտները թռչուններից, մէջքն ու
ազդրները առիւծ ու վագրներից, պոչի ծայրը
մարդիկ, իսկ մէջքի առիւծի պոչը վիշապ
օձ: — 13ր. «Հան զԱրիստոտէլ աթոռով եւ
գաշակերտքն առաջի: Եւ զՄարգարէ մեղա-
ւոր գրչակս յիշեա՛, Հոգեւոր տէր, զի եւ զո՞-
յիշեալ լիցիս առաջի ատենին Գրիստոսի»: Նկարուած է Արիստոտէլ նստած աթոռ
վրայ, ապարօշով (չալմայով) զլիսարկը փա-
թաթած, առաջին գրակալ. դէմը չոքած են
Աղեքսանդր եւ ուրիշ չորս աշակերտներ: —
16ա. «Ի հաւս գծին հան, որ հեծեալ լինի»: Այդպէս էլ պատկերն է, Աղեքսանդր ձին հե-
ծած, թուրը կողքից կախ եւ կապարճը դա-
ւակում: — 28ա. «Ով քաջ հոռետոր եւ անյողթ
Փիլիսոփայ Հոգեւոր տէր, հան զքաղաքն
զԱքանդարիայ հրաշագեղ եւ անարկու տես-
լեամբ, հրաշագործ եւ երանգ երանգ գու-
նով, որպէս վայել է քոյին սուրբ տեսու-
թեանդ. միթէ առաջին գրոց սուգն փարատի
ի խոց սրտէս ի քո ծառայէ»: — 43ա. «ԶԳրի-
գորիս կաթողիկոսն յիշեցէք ի Գրիստոս,
գնկարող այսմ գրոցս եւ Աստուած ողորմի
ասացէք. ամէն»: — 46ր. «Ծաղիկ տեղ թող,
որպէս որ ասէ. եւ զԳրիգորիս կաթողիկոսն
գնկարող սորա յիշեա»: — 101ր. Հան ծա-
ռիկիսն Գրիգորիս, այլ եւ զգծող այսմ
տառիս զՄարգարէ Արճիշեցիս յիշեցէք ի

Գրիստոս Աստուած: — 136ր—137ա. Ներ-
քեւի լուսանցքում. «Յայսմ վայրի էի, յոր-
ժամ եկաւ տէր Յովաննիսն, մեր Հոգեւոր եղ-
բայրն ի Հոգեւոր տէրէն եւ ասաց մեղաւո-
րիս, թէ յոյժ մեղադրեաց քեզ Հոգեւոր տէրն
(ի պատճառս) բէթերուն (= կաթաներուն)
որ ի հետ կշտի արճըճած խաղին կու գրես.
եւ մեղայ. աստից ի յետ զինչ Հոգեւոր տիրի
հրամանքն է, թող էնց լինի»:

Պա. Գրեցաւ գերբս ի վարագ, ի Զ եւ
ի ԶԵ թուին ձեռամբ Մարգարէ մեղսամած
Գրչիս, ի յառաջնորդութեան տէր Կարապետ
արհեստիկոպոսի եւ Ստեփաննոս նորընծայ
վարդապետին. ի վայելումն անձին իմոյ եւ
յիշատակ... (թերի):

Մարգարէ Արճիշեցոյ այս տողերէն
յայտնի է, որ Գրիգորիս Աղթամարցի նաեւ
ճարտար նկարիչ եղած է. կարող է ինքնին
ճնունդ տալ նկարներու եւ յօրինել զանոնք
հասկնալի գեղեցկութեամբ: Անշուշտ այս ճիւ-
ղին մէջ ունեցած է իրեն ուսուցիչ եւ խոր-
հրդատու զՅակոբ Զուլայեցի, որ դարուս
ստանալին քառորդին կը գործէր Աղթամար եւ
վախճանած է 1526 թուին: Այս կը տեսնուի
Աղեքսանդրի Պատմութեան մէկ ուրիշ ձե-
ռագրէ, որ բերուած է վարադում եւ այժմ կը
գտնուի Էջմիածին, նոր բաժին, թ. 1522:
Նաեւ Զեռագիրս նկարագորդ է. գրչութեան
տարին կը պակսի. որովհետեւ կան հոն նաեւ
Զաքարիա Գնունեցոյ կաթաները, Գարեգին
սրբազան (Արարատ, 1919, էջ 9) անոր
գրչութեան կանխազոյն երբ կ'ուզէ համարիլ
1544: Բայց ինձ կը թուի թէ 20 տարուով հին
ըլլայ (1525): Թ. 1ր. Նկարի մը տակը
բուն գրչի ձեռքով գրուած է հետեւեալ նկա-
տողութիւնը. «Եւ զանարժան Յակոբ նկա-
րողս յիշեցէք ի Գրիստոս. եւ եւս ստուգող
սորա գտեր Գրիգոր(իս)ն, որ մեկնեաց
գոնաւրիմակաճ սորա. եւ զԶուլայեցիս նկա-
րեաց. յիշեցէք եւ աստուած ողորմի ասա-
ցէք»: Առանց տարակուսի «տէր Գրիգոր»
կարող էր նաեւ Գրիգոր Բարունին ըլլալ,
ուսուցիչը Աղթամարցոյն. բայց, ինչպէս
ճիշդ կը գիտէ Յովսէփեան, «ստուգող սո-
րա... որ մեկնեաց զանաւրիմակաճ սորա»
խօսքերը կ'ահնարեն Գրիգորիսի կաթա-
ները. ուստի մինչ Յակոբ կը նկարագորդէր
Զեռագիրը, Գրիգորիս կը մեկնէր նկարներն
և կը ճոխացնէր Զեռագիրը բէթերով կամ
կաթաներով:

Գրիգորիսի նկարչական արուեստը հան-
դէս կու դայ նաեւ ուրիշ ձեռագիրներու մէջ.
յիշենք Էջմիածնի թ. 962 Մաշտոցը, ուր
ունի 4 մեծ մանրանկարներ (Յովսէփեան՝
Ուղարակեանք, էջ 245, ծան.): Այս Մաշ-
տոցի մանր նկարագրութիւնը տուաւ Յով-
սէփեան Հանդ. Ամս. ի մէջ (Նորից Գրիգո-
րիս Աղթամարցոյ մասին, 1930, էջ 41—60):

Մաշտոցիս գրիչն է Յովհաննէս քահա-
նայ Արճիշեցի, որդի Կարապետի, թոռն թ.
Մեծոփեցոյ աշակերտ Յովհաննէս Մանգա-
սարենց նշանաւոր գրչի, ինքն ալ աշակերտ
Յովհ. Բաղիշեցոյ եւ Մարգարէ Արճիշեցոյ:
Մաշտոցս գրած է Յովհաննէս Զէթ =
1530ին, յԱրճէշ, «ի դրունս սուրբ Գէորգայ
գորավարին, ի հայրապետութեան տեսուն
Զաքարիայի, եւ ի թագաւորութեանն Դահ-
ման փաթշահին»: Այս յիշատակարանին
տակ կը կարգանք տողերս.

«Դարձեալ յիշեցէք ի Գրիստոս եւ յա-
ղօթս ձեր գնոգեւոր հայրն մեր զտէր Գրիգո-
րիս կաթողիկոսն զԱղթամարցին, որ գգիրքս
ճաղկեր է. Գրիստոս գիւր մեղքն թողու եւ
յիշողացն. ամէն» (Հանդ., էջ 46):
Նկարներու մասին տե՛ս Հանդ. Ամս.,
ան., էջ 58—59:

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՅԻՈՅ ՄԱՆԸ

1537—1545 տարիներէն չունինք յիշա-
տակագիր մը, որ յիշէ Աղթամարի կաթողի-
կոսութիւնը¹: Բայց Զաքարիա եպիսկոպոս
Գնունեցի, որ 1544ին գտնուած է Կ. Պոլիս եւ
գրած է նկարագորդ Աղեքսանդրի վարքը
տեղւոյն Աստուածատուր պատրիարքին հա-
մար, ունի յիշատակութիւնս. «Գրեցաւ ի
խնդրոյ բազմերջանիկ եւ յոքներանեան,
շնորհագորդ եւ բանիրուն վարժապետի տէր
Աստուածատուր պատրիարքին, որ այժմ
նստի յաթոռ հայրապետին Յովհաննու Ոս-
կերերանին ի կոստանդինուպոլիս...: Եւ
եւ... Զաքարիայ մեղապարտ եպիսկոպոս,
աշակերտ շնորհագորդ Գրիգորիս կաթողի-
կոսին եւ Յովսէփ վարպետին, որ յայսմ ամի

¹ Յովսէփեան, Հանդ. Ամս. 1930, էջ 34 կը յիշէ
1542ին վանի մէջ գրուած Մաշտոցի մը յիշատակա-
րանը «... ի հայրապետութեան տեսուն Գրիգոր կա-
թողիկոսի». եւ կը համարի թէ ան Աղթամարցին ըլ-
լայ, որովհետեւ «Գրիգոր անունով կաթողիկոս չու-
նայ Էջմիածնում 1542 թուին, ուրեմն սա Աղթամար-
ցին է»: Բայց միտ է գրած որ Էջմիածնի Գրիգոր
կաթողիկոսն վախճանած է յԱրճէշ 1542 տարու-
յում. Բրիտ. թանգ.:

փոխեցաւ ի դասս անմահից եւ եղև ինձ
 մեծ սուրբ... գրեցաւ սա ի թվիս Հայոց ՁԳԳ,
 ի Սուրբ-մանաստրոս» եւն (Մանչեստր,
 John Rylands Library. Հրտ. Չաքարիա Գնու-
 նեցի, էջ 7): Ո՞վ է 1544ին, «յայսմ ամի»
 վախճանողը, Գրիգորի՞ս թէ Յովսէփ վար-
 պետ: Շարադասութեանս մէջ «որ» յարա-
 բերականը քերականօրէն Յովսէփը պիտի
 յարարեր: Այսպէս ալ հասկցուած էր մին-
 չեւ այժմ: Բայց մեզի ծանօթացուած է այժմ
 Յիշատակագրութիւն մը, էջմիածնի Նոր
 ժողովածուի Թ. 123 (Աւետարան, նկարիչ
 Սարգիս Պիճակ). Թղ. 343բ, վերջին ստա-
 ցողն եղած է Ղարաբէք, եղբորորդի Աղթա-
 մարի Փոքր Գրիգոր կաթողիկոսի, 1552ին.
 կ'ըսուի. «ընդ նմին եւ զբազմամեղ Յուսէփ
 կազմողս եւ զիմ ծնաւան յիշեցէք...»
 (Արարատ, 1919, էջ 38): Այս կազմող Յու-
 սէփն է Աղթամարցի, ուստի 1552ին տա-
 կաւին կենդանի. որով հարկ կ'ըլլայ 1544ին
 վախճանողն եւ «ի դասս անմահից» փո-
 խուողն նկատել Աղթամարի բանաստեղծ եւ
 նկարիչ Գրիգորիս կաթողիկոսը:

Չաքարիա Գնունեցի կամ Լինեցի եպիս-
 կոպոսն նոյնպէս բանաստեղծ եւ նկարիչ էր.
 ան նաեւ ուրիշ անգամ խոստովանած է, թէ
 Գրիգորիս Աղթամարցւոյ աշակերտն եղած է,
 ուսած է անկէ յատկապէս նկարչութեան ար-
 րուեստը. 1576ին ի Լիմ օրինակած եւ ծաղ-
 կանկարած է Շարակնոց մը. ուր կը խնդրէ.
 «Չաքարիա մեղապարտ գծողիս եւ նկա-
 (րո)ղիս Աստուած ողորմի սասցէք. զար-
 ձեալ աղաչեմ յիշել ի Տէր զուսուցիչքն իմ
 զչնորհազարդ եւ զպատուական հայրապետն
 զԳրիգորիս Աղթամարցի եւ զՅովսէփ վար-
 պետն, որ շատ աշխատեցան ի յուսուցանելն
 իմ» (էջմիածին, Թ. 1613, Թղ. 318բ: Յով-
 սէփեան, Սաղարկեանք, Գ., էջ 123—124.
 հմմտ. Ա., էջ 244, ծան.):

Գրիգորիս Ա. Աղթամարցի ունեցաւ իրեն
 յաջորդ Գրիգորիս Բ. Փոքր կոչուած, որդի
 Ասկանդարի (Իսկենդերի) եւ Գուրան-փաշի,
 եղբայր Խեղենի (1544—1572), որ կը յիշուի
 առաջին անգամ 1546ին (Յայսմաւուրք
 գրուած ՁԳԵ. Թուին ի Ծպատ, «ի հայ-
 րապետութեան Գրիգորիսի Փոքր» (էջմ.
 Թ. 51. ՀԱ. 1930, էջ 55). երկրորդ անգամ
 1547ին էջմ. 1034 (հմմտ. Հանդ. Ամս. 1930,
 էջ 55): վախճանած է 1572ին: Իր յաջորդը
 նոյնպէս կոչուած է Գրիգորիս Գ. Փոքր:

որդի Սեֆէատինի եւ Ղրիմ Սաթուհի (1572—
 1615). ան 1573ին կը ներկայացուի «նորըն-
 ծայ կաթողիկոս»:

Կը համարիմ թէ այսպէս լուծուած կ'ըլ-
 ւայ վերջնականապէս Աղթամարի Գրիգորի-
 սեանց կնճիւղը:

ՆԿԱՐԱԳԻՐԸ

Աղթատ եւ մեր տեղեկութիւնները Գրի-
 գորիսի անձին եւ գործունէութեան մասին,
 կարենալու համար դժեւ անոր նկարագրին
 պատկերը: Բայց ունինք իր գրութիւնները,
 որոնք կը ներկայացնեն իր հոգւոյ կարողու-
 թիւններն եւ միտութիւնները. ունինք դար-
 ձեալ իր մանրանկարները, գործնք ստեղ-
 ծազորած է, եւ ժամանակիցներու արտա-
 յայտութիւնները:

Ան սերունդն է թաղաւորական տան,
 ինչպէս աւանդութիւնը իր տոհմին մէջ վե-
 րապարծ կը հաստատէր: Այդ թաղաւորա-
 կան տան կը պատկանէր Աղթամարի կաթո-
 ղիկոսութիւնը: Գրիգորիս որորանէն կո-
 չուած էր այդ յաջորդութեան. եւ դաստիար-
 ակուած էր այդ նպատակին համար, Գրիգոր
 Արճիշեցւոյ Դպրոցին մէջ: Իր տաղերն եւ
 մանրանկարներն հանդէս կը բերեն իր մէջ
 զգայուն արուեստասէր ոգի մը, որ կրթու-
 թեամբ մշակուած է: Չգեցած է ան իր ժա-
 մանակին կաթողիկոսական աստիճանը. եւ
 եղած է խորանին պաշտօնեան եւ ազգին հո-
 վուապետը: Այս աստիճանին մէջ կը գտնենք
 զինքը առաջին անգամ: Իր առաքինութիւն-
 ները, հոգեկան կարողութիւնները կ'ար-
 տայայտուին իր մէջ այս պաշտօնին մէջ:

Նուրբ բնավորութիւն, ազնուական
 սիրտ, շնորհազարդ հոգի: Երախտագէտ է
 ան հանդէպ իր ուսուցիչներու, Գր. Արճի-
 շեցւոյ, (Յակոբ Զուղայեցւոյ) եւ Յովսէփ Աղ-
 թամարցւոյ: Պատրաստակամ է հանդէպ ա-
 մէնուն, որոնք որ եւ է առաջարկութիւն բե-
 րած են իրեն: Ունի եղբայրական գորով
 հանդէպ իր հարազատներու. իր եղբոր ծո-
 վամոյն ըլլալը յուզած է զինքը եւ լացուցած:
 Եղած է ուսումնասէր, աշխատասէր: Գա-
 ջարդած է զընդլեակն արուեստի մար-
 դիկ: Նկարած է անոնց համար մանրա-
 նկարներ: Երգած է մեծ թուով տաղեր:

(Շարունակելի): 2. Ն. ԱԿԻՆԵԱՆ

Հ Ո Յ Կ Ո Ւ Ո Ն Բ

1. Հրտ — ԲժՏ

1. Կը պատմէ Փաւստոս, Ե. 43, թէ
 Մերուստան «գայր հասանէր ամենայն բաղ-
 մութեամբն զօրացն Պարսից յերկիրն Հայոց:
 եւ թողոյր զբանակ զօրացն Պարսից ի գա-
 ւառին Կորճէից: Եւ ինքն իւրով սեպհակա-
 նան գնդաւն՝ հրոսիւն ժողովելով՝ մեկնէր
 դատանէր յԱրեայ դնդէն, կամէր յանպատ-
 րաստից գողտ անկանել ի վերայ Մա-
 նուէլի»: 2. Եղիշէ, Գ., էջ 48. Վասակ կ'ըսէ
 Մարգարանին. «Սակաւիկ մի երկայնամիտ
 լեր... մինչեւ ես ինձ ոյժ ժողովեցից զօր ի
 թիկունս ամերայ... Եւ անդէն հրոս համեալ
 ի Սիւնեաց աշխարհէն՝ զիւր գունդն ստուա-
 րացոյց ի թիկունս օգնականութեան մողաց
 եւ մողպետին: 3. Շահապիլմանի ժողովին է.
 կանոնը կը հայի արեւանդութեան. եւ կը
 սահմանէ. «...եւ որք հրոսն երբեալ էին
 օգնականք սուտ փեռային, առ սյրն. ծ.
 դրամ տուգանս տացեն. եւ զհրոսին դրամն՝
 զկէսն յեկեղեցի տացեն...» (էջ 78, Հրտ.
 Ակինեան): 4. Աւելի ուշ՝ Թ.—Ժ. դարուն
 բառս կը ներկայանայ հրոսակ ձեւով (Մ.
 Սոր. Ա. 10 Յովհ. Դրասիւ. 64):

Բառիս ստուգաբանութեան համար եղած
 են այլ եւ այլ փորձեր. զորոնք ընդունելի չէ
 դուած Հ. Աճառեան, (Արմաստ. Բառարան,
 Դ. 443—444):

Ես կ'առաջարկեմ հետեւեալը. Չաքա-
 րիա հոետորի անունը կրող Պատմութեան
 մէջ կը յիշուի ԻրժՏ անուն ժողովուրդ մը,
 որ զբացի է Ամազոններու. անոնք «մարդիկ
 են երկար անդամներով, որոնք զէնք
 չեն կրեր եւ զորոնք ձիերը չեն կրնար տա-
 նիլ, որովհետեւ յաղթանդամ են» (էջ 253):
 Այս անունի (ՄժՏ) տակ Բիւզանդական
 մատենագիրք կ'իմանան սիկսթական պատե-
 րադիկ ժողովուրդ մը, որ իր բնակութիւնն
 ունէր յայնկոյս Կասպից ծովու եւ մերթ ընդ
 մերթ սասպատակութեամբ կ'երեւար այլեւ-
 այլ քաղաքակիրթ աշխարհներ, եւ կը վերա-
 դաւնար աւարով: Արարացի մատենագիրք
 յաճախ կը խօսին անոնց մասին: Արեւմուտք
 Հերուլ կ'անուանեն զանոնք (Marquart, Ost-
 europäische Streifzüge, էջ 386—388):

Ազգի անունը մեր քով վերածուած է
 բառի (ինչպէս «խուժ ու դուժ»). 'խանի-
 ճաղանջ գորք' իմաստով:

2. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՅՈՒՆԻՍ ՀՈՅՆՐԷՆ ԶԵՆՈՒԳՐՈՑ
 ՆԻԿՈՍԻՈՑԻ Ի ԿՈՊՐՈՍ

(ԱՅԺԾ ՓՈՒՆԳՐՈՒՄԵՃ ԱՆԹԻԼԵԱՍ,
 ԿՈՒՊՐՈՍԻ ԿՈՍՏԱՆԴՆՆՆԵՐ)

(Շարունակելի):

9.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ
 ԶՈՎՃԱՆՆՈՒ ԵՒ ԳԱՆԻԵԼԻ

Հին Թիւ 22: ԺԵ./ԺԶ. դար:

ԹՈՒՂԹՔԻ 217: — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 20,5 × 15
 հմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻԻԹ՝ բուրբ: —
 ԿԼԶՄ՝ կաշեպատ տախտակ: — ՄԱԳԱՂ. ՊԱՀՊԱՆԱԿ՝
 չումի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ. կամ բարբրու ետեւ-
 առաջուրիւն: — ԳԱՏԱՐԿ՝ 96ա, 135բ—136ա, 187բ.
 217բ: — ԳԻՐ՝ բարբրի: — ԽՈՐԱՆ՝ չումի: — ԿԻ-
 ՍԱՆՈՐԱՆ՝ 1բ, 97ա, 121ա, 188ա: — ՆԿԱՐ՝ չումի:
 — ՉԱՐԳԱԳԻՐՔԻ ԵՒ ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳՔԻ կան: — ԽՈ-
 ՐԱԳԻՐՔԻ կարմիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԵ./ԺԶ դար: —
 ՏԵՂԻ ԵՒ ԳՐԻԶ՝ ամճագոր:

Մատենաւ է Անդրէի Մեկնութիւն Յայտ-
 նութեան Յովհաննու եւ Թովմայի (Մեծո-
 փեցւոյ) Մեկնութիւն Դանիէլի. եւ Պատմու-
 թիւն աւետարանին Յովհաննու:

1. Թղ. 1բ—95բ. Մեկնութիւն Յայտ-
 նութեան Յովհաննու Անդրէի եւ Արեթասոյ:
 վերջը սկսեալ ՀԳ գլխի կէսէն պակասաւոր
 (տե՛ս Թղ. 188ա—210):

Հրտ. Երուսաղէմ 1855:

2. Թղ. 97ա—116ա. Պատմութիւն ի
 Տեսլեան Դանիէլի մարգարէէ. Մեկնութիւն
 եւ կարճ ի կարճոյ ի Թովմայ վարդապետէ
 (Մեծոփեցւոյ): Եւ էր այր մի բնակեալ ի
 Բարելոն եւ անուն նորա Յովակիմ...: Պարտ
 է գիտել զի Երեմիա մարգարէն ստաց ի գիրս
 իւր...:

3. Թղ. 116բ—118բ. Վասն Ս. Հաղոր-
 դութեան բանք (անխորագիր): Եւ պարտ
 է գիտել զի որակութիւն նշխարին ժ յեղա-
 նակաւ ուսուցանէ մեզ, թէ որպիսի սրբու-
 թեամբ պարտ է ընդունել զՄարմինն Քրիս-
 տոսի...:

4. Թղ. 119ա նտրագիր. Մեկնութիւն
 խորանաց Աւետարանին: Մատենաք առ-
 սուածագիծք եւ հոգէրուխ վարդապետու-
 թիւնք իմաստից...: Կը շարունակուի Թղ.
 211ա—217ա:

5. Թղ. 121ա—183ա. Պատմութիւն
 սբանչելի գործոց եւ վարդապետութեան